Հավելված N 2
ՀՀ կառավարության 2024 թվականի
հոկտեմբերի 3-ի N 1578 - Ն որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆ ԿԱՄ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԻՄԱՆ ՎՐԱ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՊԱՇՏՈՆԻ ՀԱՎԵԼԱՎՃԱՐԻ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՉԱՓԸ

1. Կոմիտեում պետական պաշտոն կամ պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց կատարողականի գնահատման արդյունքում հավելավճարի ամսական առավելագույն չափ է համարվում՝

1) կոմիտեի նախագահի, նախագահի առաջին տեղակալի, նախագահի տեղակալի համար՝ հիմնական աշխատավարձի հնգապատիկին հավասար գումարը.

2) նախագահի խորհրդականի, նախագահի օգնականի, նախագահի առաջին տեղակալի օգնականի, նախագահի տեղակալի օգնականի համար՝ հիմնական աշխատավարձի կրկնապատիկին հավասար գումարը.

3) հարկային կամ մաքսային ծառայության պաշտոններ զբաղեցնող վարչության պետի, վարչության պետի տեղակալի, բաժնի պետի, բաժնի պետի տեղակալի, բաժանմունքի պետի, գլխավոր հարկային տեսուչի, գլխավոր մաքսային տեսուչի, գլխավոր օպերլիազորի, գլխավոր մասնագետի համար՝ հիմնական աշխատավարձի եռապատիկին հավասար գումարը.

4) հարկային կամ մաքսային ծառայության պաշտոններ զբաղեցնող ավագ հարկային տեսուչի, ավագ մաքսային տեսուչի, ավագ օպերլիազորի, ավագ մասնագետի, առաջատար մասնագետի համար՝ հիմնական աշխատավարձի քառապատիկին հավասար գումարը.

5) հարկային կամ մաքսային ծառայության պաշտոններ զբաղեցնող հարկային տեսուչի, մաքսային տեսուչի, օպերլիազորի, մասնագետի, առաջին կարգի մասնագետի համար՝ հիմնական աշխատավարձի հնգապատիկին հավա-սար գումարը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

04.10.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ